ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն պարոն մարզպետ

Տեղեկացվում է Ձեզ, որ <<Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարվել է նոր մրցույթ:

Մրցույթը կկայանա սեպտեմբերի 29-ին , ժամը 15°°-ին:

Կից ներկայացվում են քաղվածք կառավարման խորհրդի նիստի թիվ 8 արձանագրությունից և հայտարարության տեքստը:

Առդիր 3 թերթ:

Խորհրդի նախագահ՝ Ա. Գրիգորյան

04.08.2020թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ Ն-15544-2020
04 08 2020 թ.

# Քաղվածք

<<ՀԱՅԿԱՇԵՆԻ Գ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի ԽՈՐՀՐԴԻ 2020Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 4-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ N 8 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Նիստին ներկա էին խորհրդի 8 անդամներից 8-ը

Օրակարգում

Տնօրենի թափուր տեղի համար նոր մրցույթի հայտարարում

Լսեցին- Համաձայն ՀՀ կառավարության 2010թ. մարտի 4-ի N 319 որոշման <<Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջն. դպրոցի>> ՊՈԱԿ –ի տնօրենի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու հարցը:

Որոշեցին- 1.ՀՀ Արմավիրի մարզի <<Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջն. դպրոցի>> ՊՈԱԿ –ի տնօրենի թափուր տեղի համար հայտարարել նոր մրցույթ:

2. Նոր մրցույթ նշանակել 2020թ . սեպտեմբերի 29-ին, ժամը 15:00-ին

3.Խորհրդի որոշումը ներկայացնել ԿԳՄՍ նախարարին և Արմավիրի մարզպետին:

4. Տնօրենի թափուր տեղի համար հայտերի ընդունման պատասխանատու նշանակել Աշխեն Ազատյանին:

Խորհրդի նախագահ՝ Ա. Գրիգորյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի <<Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

*1.ՀՀ քաղաքացիությունը,*
*2.բարձրագույն կրթությունը,*
*3.ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր) :*

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
*1.դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով,*
*2.ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,*
*3.հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը,*
*4.տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացնել մրցույթից առնվազն երեք օր առաջ),*
*5.հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),*
*6.աշխատանքային գրքույկի պատճենը:*

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2020թ. օգոստոսի 19-ից մինչև սեպտեմբերի 17-ը ներառյալ, ամեն օր ժամը $10^{00}$-ից մինչև $15^{00}$-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից, <<Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2020 թվականի սեպտեմբերի 29-ին, ժամը $15^{00}$-ին <<Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում:

Հասցե՝ Արմավիրի մարզ, գ. Հայկաշեն, 3-րդ փող. 4-րդ շենք

Տեղեկությունների համար զանգահարել 098 47 20 80 հեռախոսահամարով

<<Հայկաշենի Գ. Կիրակոսյանի

անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

կառավարման խորհուրդ